

**ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՈՒՂԱՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԼԾԻՑ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ**

(Բուդայի ազատագրության 300-ամյակի առթիվ)

Ս. Է. ՔՈԼԱՆՋՅԱՆ

Անցել է 300 տարի այն բախտորոշ օրից, երբ շուրջ մեկ և կես դար օսմանյան լծի տակ անպատմելի կեղեքումների ենթարկված Հունգարիայի սիրտը՝ Բուդան¹ վերագտավ իր ազատությունը: Օսմանյան լծից Հունգարիայի և Բուդայի ազատագրության համար մղված երկար ու համառ պայքարից անմասն չմնացին նաև հայ ժողովրդի զավակները: Թեև Հայաստանն ու Հունգարիան գտնվում են իրարից շատ հեռու, սակայն նրանց վիճակվել էր նույն ճակատագիրը. թե՛ Հայաստանը, թե՛ Հունգարիան երկար դարեր հեծում էին Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

Դեռևս հազար տարի առաջ, օտարերկրյա արշավանքներից հալածական բազում հայեր ապաստան էին գտել Հունգարիայի հյուրընկալ հողում: Շատ վաղ ժամանակներից Հունգարիայի ազատագրությանը զինվորագրված հայ գործիչները հույսեր էին տածում, որ իրենց երկրորդ հայրենիքի՝ Հունգարիայի ազատագրումից հետո կփրկվի նաև մայր հայրենիքը՝ Հայաստանը:

Հայագետ դոկտոր էդ. Շյուցը մատնանշել է ոչ միայն դեռևս XIII դարում Հունգարիայի նախկին մայրաքաղաք էստերգոմում հայ գաղութի գոյության փաստը, այլև հավանական է համարել հայերի զինված պայքարը այդ կենտրոնը արշավող մոնղոլ-թաթարական հորդանների դեմ²:

Հետագայում Հունգարիան և նրա նոր մայրաքաղաք Բուդան ազատագրելու գործում մեծ վճռականություն և նվիրում են հանդես բերում անգամ հարևան երկրներում գործող հայազգի գործիչները: 1541 թ., երբ Բուդան ընկավ օսմանյան գերիշխանության տակ, հարևան Մոլդովայի իշխան Պետրու Ռարեշի (1527—1538 և 1541—1546) խորհրդական և զորահրամանատար, հայազգի ազնվական Պետրու Վարդիկը Բուդայի անկման հաջորդ՝ 1542 թ. կոչ է ուղղում Նվրոպայի քրիստոնյա պետություններին՝ հակաօսմանյան համադաշնակցություն կազմել և ազատագրել Բուդան: Վարդիկը նշում էր, որ Բուդան ազատագրելու հարմար ժամանակը հիմա է, որովհետև թուրքերը կարող են հետագայում բերդը ամրացնել և գրավումը դժվար կլինի: Սակայն հայ գործիչը իր վարած հակաթուրքական քաղաքականության համար թանկ վճարեց: Մոլդովայի նոր իշխան Իլյաշը (1546—1551), որը, ի հակադրություն իր

¹ Բուդան և Պեշտը նախապես եղել են հունգարական առանձին քաղաքներ և միայն 1872 թ. Նրանց միավորումով առաջացավ Հունգարիայի նոր մայրաքաղաքը՝ Բուդապեշտը:

² Էդ. Քոլանջ. Շյուց. Հայերի ազատագրության գլխավոր ուղղությունները միջին դարերում և էստերգոմի հայ գաղութը. — Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից. Երևան, 1983, էջ 40: Վ. Բ. Բարխուդյան. Էդմոնդ Շյուց (ծննդյան 70-ամյակի առթիվ). — «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3, էջ 52:

հոր, սկսել էր վաճել թուրքամետ քաղաքականություն, 1518 թ. ապրիլի 7-ին գլխատել տվեց Վարդիկին³:

Նույն ազատագրական գործով է զբաղվել նաև հայտնի դիվանագետներից և զորահրամանատարներից մեկը՝ հայազգի Պետրոս Գրիգորովիչը, որ միջազգային դիվանագիտության մեջ հայտնի է նաև Արմեն Պետեր անունով: Նա արևմտամետական երկրներից Ռուսաստան կատարած դիվանագիտական բազում ուղևորությունների միջոցով աշխատեց Եվրոպայի՝ պետությունների և Իրանի միջև միասնական դաշինք ստեղծել ընդդեմ Օսմանյան կայսրության: Պետրոս Գրիգորովիչը ձգտում էր հիշյալ դաշինքի միջոցով ազատագրել նաև Հունգարիան և Հայաստանը, սակայն 1615 թ., երբ հայազգի դիվանագետը պատրաստվում էր նոր ուղևորության դեպի Արևելք՝ գլուխ բերելու հիշյալ համադաշնակցությունը, ընկավ եղեռնական մահով Մոլդովայի մայրաքաղաք Ցաշում: Նա կապի մեջ է եղել հունգարական թագավորության հետ: Նրա լվովի բնակարանից հայտնաբերվել են հունգարերեն գրված նամակներ՝ Բատորիների կողմից: Պետրոս Գրիգորովիչը հեղինակել էր իր իշխանի՝ Միհայ Վիտեազուի օրագրությունը, որը, սակայն, այժմ կորել է: Նրա գործի հավաստիության և արժեքի մասին տեղեկանում ենք դրանից օգտված միջնադարյան հունգար մատենագիրներ Իշտվան Սամոշկյոզիի և Վոլֆգանգ Բետլենի երկերից:

Հունգարիայի ազատագրության գործին նվիրված հայերի թվում անմոռանալի անուն է թողել հակաօսմանյան շարժման ամենաերևելի հայ դիվանագետ Պետրոս Ապետիքը: Նա քաջ գիտակցում էր, որ թուրքերի հաջողությունների գաղտնիքը նրանց ուժի, խելքի կամ հեռատեսության մեջ չէ, այլ եվրոպական պետությունների անհամերաշխության մեջ: Այդ պատճառով էլ, Ապետիքի ասելով, թուրքերը մշտական մի աղոթք ունեն, որ ալլահը համերաշխություն չտա գլավուրներին: Դրա համար էլ հայ դիվանագետը եվրոպական պետությունների միջև համադաշնակցության կոչ էր անում և հաջողության հասնելու դեպքում ցանկանում էր ներգրավել նաև Իրանը: Եթե անգամ շատ համառոտակի կերպով նկատի ունենանք այդ գործի հաջողության համար նրա ճանապարհորդությունների ուղեգիրը, որը սկսելով Հոռմից գնում էր մինչև Մոսկվա, ապա Քեհհրան և հասնում էր Ավստրիա, Հունգարիա, Հայաստան ու Վրաստան և այլ երկրներ, ապա պարզ կլինի, թե ինչպիսի մեծ նվիրում է ունեցել նա դեպի օսմանյան լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրության գործը: Նրա մտասեևոումն էր ազատագրել Հունգարիան և Հայաստանը:

1683 թ. Վիեննայի պատերի տակ կանգնեցվեց և ըստ իր իշխանի օսմանյան հսկայական բանակը: Այս հաղթանակին իրենց մասնակցությունն էին բերել նաև Սոբեսկու բանակի մաս կազմող, 5000 լեհահայերից բաղկացած հայկական զորագունդը, ինչպես նաև Վիեննայում գործող մի շարք հայ գոր-

³ Վլադ Բընըցյան ու. Հայկական ծագում ունեցող բարձրաստիճան պաշտոնյաները Հին Մոլդովայում.—«Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 279; Documente privioare la Istoria Romanilor culese de Hurmuzaki. Vol. II, partea I—a (1451—1576), p. 24).

⁴ Պատմարան Գ. Պ. Պինգիրյանը սխալվում է, երբ իր հոդվածում երեք անգամ նշում է, որ Պ. Գրիգորովիչին մահապատժի ենթարկող Շտեֆան Տոմշան եղել է Վալախիայի իշխան. տե՛ս Գ. Պ. Պինգիրյան. Роль польских дипломатов-армян в турецко-польских отношениях первой четверти XVII века.—«Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 4, էջ 193: Այնինչ վերջինս եղել է Մոլդովայի իշխան (տե՛ս Մոլդովայի իշխանների ցուցակը. Documente privind Istoria Romaniei, Introducere, vol. I. Bucuresti, 1956, p. 491. Հոդվածագիրը. հիշատակելով հանդերձ Ցաշը իբրև մահապատժի վայր, չի նկատում, որ այդ քաղաքը դրանից առաջ և հետո, մինչև 1859 թ., եղել է Մոլդովական իշխանապետության մայրաքաղաքը: Լեհական և լեհահայ աղբյուրները ուլախ, օլախ, վլախ և կամ Վլահք ասելով հասկացել են մոլդովացիներին և Մոլդովան (տե՛ս Ղ. Ալիշան. Կամենից, տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, հասարակայ յաւելութովք. Վենետիկ, 1896, էջ 17—19, 48, 78, 81 և հտ.):

ժիշները Այնուհետև Հունգարիայի ազատագրության գործը սկսում է նոր թափ առնել։ Ոգևորված տիրող նոր իրադրությունից, 1683 թ. ձմռանը Ապետիքը կրկին մեկնում է Իրան՝ դաշինք կնքելու համար։ Ավստրիական կայսրությունը, Հունգարական թագավորությունը և Լեհաստանը միասնաբար Ապետիքին էին վստահել այդ մեծ գործը։ Լեոպոլդ I կայսրը, նկատի ունենալով Ապետիքի հունգարասիրությունը և նվիրվածությունը, 1684 թ. իր շնորհագրում նշում էր, որ Հունգարական թագավորության, նրա ժողովրդի և հունգար ազգի հանդեպ տածած սիրո համար պատվում է նրան կոմսության տիտղոսով և նշանակում Հունգարական թագավորության և նրան միացած մասերի իսկական կոմսերի թվում, Ապետիքին շնորհվում է նաև կալված։ Ապետիքը առաջին հայն էր Հունգարիայում, որ ազնվականություն ստացավ։ Սակայն 1684 թ. հետո նա, դժբախտաբար, իսպառ անհետանում է համաեվրոպական միջազգային դիվանագիտության ասպարեզից⁵։ Անկասկած հայազգի այս դիվանագետը ևս ընկավ եղեռնական մահով արևելյան վտանգավոր ճանապարհների քառուղիներում, երբ այնքան մոտ էր իր փայփայած երազների իրականացումը։

Սակայն Հունգարիայի և նրա մայրաքաղաք Բուդայի ազատագրությունը տեսնելու բախտին արժանացան հետագայի այլ հայ գործիչներ։ Վիեննայի մեծ հաղթանակից հետո, երբ օսմանյան հզոր բանակներին չէր հաջողվել մխրճվել Նվրոպայի սիրտը և ամբողջովին ստրկացնել քաղաքակիրթ աշխարհը, Բուդայի ազատագրության հարցը արդեն համաժողովրդական բրնույթ էր ստացել։ այդ պայքարին փութացել էին իրենց մասնակցությունը բերելու Նվրոպայի քրիստոնյա բազմաթիվ ժողովուրդներ, ինչպես նաև հայերը։

Բուդայի ազատագրությանը մասնակից հայերի թվում հատկապես կարևոր դեր կատարեցին Արևմտյան Հայաստանից Հունգարիայի մայրաքաղաքում հաստատված ոմն Գաբրիելը և այլ հայեր։ Ներկայումս էլ Վիեննայի հերեմնի կայսերական, այժմ՝ ավստրիական ազգային մատենադարանի հայերեն գրչագրերի շարքում է պահվում հիշյալ Գաբրիելի ինքնաձեռագիր մատյանը, որն ունի ճանաչողական մեծ արժեք։ Ինչպես Գաբրիելի, այնպես էլ մնացյալ հայերեն ձեռագրերի փոքր ժողովածուն առանձին գրքով դեռևս 1891 թ. հայագիտությանն է ներկայացրել բազմահմուտ հայագետ Հակոբոս Տաշյանը⁶։ Գաբրիելի ձեռագիրը տարբեր նյութերի ժողովածու է՝ հեղինակի կողմից գրված մեծարժեք ժամանակագրությամբ, այլ բնույթի նյութերով և իր իսկ կատարած նկարագրողումներով։ Ձեռագրի վերջին մասը, ինչպես և նկարները, ավարտվել են Բրասլովում (Բրեսլաու, այժմ Վրոցլավ)։ Գաբրիելի ժամանակագրությունը ականատեսի միանգամայն հավաստի տվյալներ է բովանդակում ինչպես իր կյանքի ու գործունեության, այնպես էլ, մասնավորապես, Հունգարիայի քաղաքների ազատագրման վերաբերյալ։

Գաբրիելից մեկ հասած մյուս սկզբնաղբյուրը այժմ Վիեննայի պետական արխիվում պահվող, դարձյալ իր իսկ ձեռքով գրված նամակների այն խումբն է, որը նա գրել էր Բուդայի բերդից և ուղարկել Վիեննա։ Առաջին անգամ դրանք հրատարակել է հունգար գիտնական Արպադ Կարոլին իր աշխատությունների մեջ 1886 թ.⁷, և ապա 1887 թ.՝ հունգարահայ պատմաբան, համալսարանի դասախոս, հրապարակագիր և հայագետ Անտալ Մուլնարը (1847—1909) Գեոլոգում լույս տեսնող «Արմենիա» հունգարերեն հայագիտական

⁵ Տե՛ս «Բազմավեպ», 1955, էջ 226—228.

⁶ Հակոբոս Տաշյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա. Վիեննա, 1891, էջ 29—34. Cod Arm. № 21.

⁷ Karoly Arpad. Buda es Pest visszavivása 1686—ban. Budapest, 1886, 1936 (2-րդ հրատ.)։

ամսագրում⁹։ Հայերեն բնագիրը հրատարակել է բազմավաստակ հայագետ Հ. Ոսկյանը⁹։

Սակայն նախ և առաջ տեսնենք, թե ո՞վ էր Գաբրիելը։

Մեր հիշատակած Արպադ Կարուին և Անտալ Մորնարը գլխավոր հայ հերոսին ճանաչում են իբր Գաբրիել կամ Գաբոր էորմենի (այսինքն Գաբրիել Հայ) հունգարական ձևով։ Հայագետ Հ. Տաշյանը 1891 թ. առաջին անգամ նկարագրելով Գաբրիելի ինքնաձեռագիր մատյանը, հեղինակին հիշել է իբրև «գրիչ և նկարիչ Գաբրիել»¹⁰։ Հետագայում բազմավաստակ պատմաբան Արշակ Ալպոյաճյանը իր մի քանի գործերում Գաբրիելին անվանեց Թոխատեցի, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ըստ իր ինքնագիր ժամանակագրության, վերջինս 1682 թ. եղել էր Թոխատում և տեսել իր մորը¹¹։ Ալպոյաճյանի հետևությունները էլ մինչև օրս նրան կոչել են Գաբրիել Թոխատեցի կամ Եվդոկիացի¹²։ Հ. Ոսկյանը նրան միայն իբրև Գաբրիել է հիշատակել¹³, իսկ Ա. Հովհաննիսյանը՝ «Գաբրիել ժամանակագիր»¹⁴։

Որ միայն Գաբրիել անվան հիշատակումը ավելի ճիշտ է եղել, այդ ապացուցվում է նաև հայ հերոսի թե՛ ինքնագիր մատյանից և թե՛ նրա կողմից գրված գաղտնագիր նամակներից, որոնցում նա ամենուրեք իր մասին հիշատակել է միայն Գաբրիել ձևով։

Սակայն իրականում որտեղացի էր Գաբրիելը։ Այդ հարցի ճշման գործում վճռական նշանակություն ունի Գաբրիելի մերձավորներից վիեննաբնակ Հովհաննես Դիրողատուի կողմից լեոպոլդ I կայսրին ներկայացված զեկուցագիրը։ Այստեղ Գաբրիելին նա ճանաչում է իբրև շապինգարահիսարցի, որի հիման վրա էլ գիտնական. Տեպլին վերջին շրջանում հրատարակած իր մի հոդվածը միանգամայն ճիշտ կերպով վերնագրել է Գաբրիել Շապինգարահիսարցի¹⁵։

Գաբրիելի վերոհիշյալ ինքնագիր մատյանի ժամանակագրության մասը Տաշյանի անդրանիկ հրատարակումից հետո, երկրորդ անգամ, առաջաբանով և ծանոթագրություններով լույս է ընծայել պրոֆ. Վ. Հակոբյանը¹⁶։ Գաբրիելի ժամանակագրության շնորհիվ էլ մենք տեղեկություններ ունենք նրա կյանքի 1682—1697 թթ. ժամանակահատվածի մասին։ Սակայն 1682 թ. առաջ Գաբրիելի մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել։ Այժմ սույն ժա-

⁹ Molnar Antal. Ormenyek Buda vészfoglalásárol. — Armenta, Szamosujvar. 1887, № 1.

⁹ Համազասպ Ոսկյան. Ներսես Երևանցին և Բուդապեստի ազատագրության համար գրված հայերեն ծածկագիր նամակները. — «Հանդես ամսօրյա», 1967, էջ 277—282։ Գաբրիելի ծածկագիր նամակների վերծանման գործում իր ժամանակին Հ. Ոսկյանին կարևոր օգնություն է ցույց տվել հայագետ զոկտ. Մեսրոպ Գ. Գրիգորյանը։

¹⁰ Հ. Տաշյան. Նշվ. աշխ., էջ 29։

¹¹ Ա. Ալպոյաճյան. Հայ եպիսկոպոսի մը առաքելությունը ի Հայկելիսաան Ժէ գարուն. Գահիրե, 1946, էջ 66։ Նույնի՝ Պատմություն Եվդոկիո հայոց. Գահիրե, 1952, էջ 1058—1061։ Նույնի՝ Բոքատեցի Գաբրիել նկարիչ. — «Զարթոնք», բացառիկ, 1962, Բեյրութ, էջ 226—227։

¹² Հր. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Ե, Երևան, 1962, էջ 296։ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան. հ. II, Երևան, 1956, 402—403։ Э. Д. III юц. Новые данные о Габриеле Токатеци. — ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1961, № 1, էջ 103—106։ Հ. Ս. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում. Երևան, 1961, էջ 215։ Մ. Գրիգորյան. Նոր Եյութեքի դիրտություններ հրատարակիչ Վանանդեցվոց մասին. Վիեննա, 1969, էջ 57 և այլն։

¹³ Հ. Ոսկյան. Նշվ. աշխ., էջ 272։

¹⁴ Ա. Հոռո Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. հ. 2, Երևան, 1952, էջ 252։

¹⁵ Karl Teplý. Gabriel aus Sabinkarahisar. — «Հանդես ամսօրյա», 1972, № 4—6։

¹⁶ Մանր ժամանակագրություններ. հ. II, էջ 402—409։

մասնակազրույթյան միջոցով անցնենք նրա կյանքի ուրվագծմանը¹⁷։ 1682 թ. Գաբրիելը գտնվում էր Բրաբում, սեպտեմբերի 5-ին հասնում է Բաղդադ, ապա նաև անցնում Բասրա, որտեղից նա կրկին գալիս է Բաղդադ, ապա գնում է Քիրքուկ և հասնում Մոսուլ։ Դրանից հետո նա նշում է, որ լինում է Արևմտյան Հայաստանում, նախ՝ Մերդին և ապա՝ Դիարբեքիր, որտեղից դուրս է գալիս 1683 թ. փետրվարի 20-ին և զատկի օրը՝ ապրիլին 1683 թ. ապրիլի 8-ին լինում է Սեբաստիայում։ Ապա ապրիլի 15-ին նա անցնում է Թոխատ, իսկ մայիսի 25-ին հասնում է Զիլե, ապա անցնում է Անկարա և Բեկրազարի և ի վերջո մուտք է գործում Կ. Պոլիս, որտեղից էլ 1683 թ. հուլիսի 26-ին անցնում է Բելգրադ և ապա օգոստոսի 30-ին հասնում է Պոտիմ, այսինքն Հունգարիայի այն ժամանակվա մայրաքաղաք Բուդա, ուր և հաստատվում է 1683 թ. օգոստոսի վերջից, ամբողջ 1684 թ. և մինչև 1685 թ. սեպտեմբերի 12-ը Գաբրիելը ոչինչ չի գրել իր ժամանակազրույթյան մեջ իր կյանքի անցած ուղու մասին։ Վիեննայի պաշարման և ազատագրման օրերին Գաբրիելի մասին տեղեկություն չունենք։ Անկասկած, նա Հունգարիայում պետք է լիներ։

Դատելով դարձյալ նրա ժամանակազրույթյանից, Գաբրիելը, նախքան Բուդայի ազատագրումը, 1685 թ. սեպտեմբերի 12-ից սկսած ականատես է հղել Հունգարիայի քաղաքների ազատագրմանը։ Հիշյալ օրն էլ, 45 օրվա մարտերից հետո, ավստրիացիները գորհով վերցրել են «Ուլմարու բերդը», այսինքն՝ էրշեկուվարը։ Նրան հայտնի են թուրքերի փաշայի՝ խոջօղլու, ինչպես նաև ավստրիական զորքի հրամանատար հերցոգ դ'Լորենի անունները։ Նա գրում է նաև, որ բերդում եղած բոլոր թուրքերին կոտորում են։ Այսպիսով, Բուդայի ազատագրումից դեռ մի քանի տարի առաջ Գաբրիելին տեսնում ենք արդեն էրշեկուվարի գրավման ականատես, ուր նա, հավանաբար, նաև պատասխանատու առաջադրանքներ էր կատարում, սակայն պարզապես չուղում է այդ մասին՝ հայտնի պատճառներով։ Գաբրիելը նշել է նաև, որ իր կրկին «Ուլմարից», այսինքն՝ էրշեկուվարից էր, այլազգի և մեծ զարմից և հոր ընկավ ավստրիացիների ձեռքը, «անտի ուղարկեցինք Վիեննայ ղինքըն Բ (2) դստերովն»¹⁸։ Որ Գաբրիելը պատասխանատու մարդկանց հետ սերտ կապերի մեջ է գտնվել նախքան Բուդայի ազատագրումը, այդ երևում է դարձյալ նրա կազմած ժամանակազրույթյանից¹⁹։

Ապա Գաբրիելին հաջողվում է մերթ լինել թուրքական գերիշխանության տակ գտնվող երկրներում և մերթ էլ անցնել Վիեննա՝ ամենայն հավանականությամբ Բուդայի և հունգարական մյուս քաղաքների ազատագրման համար նախաձեռնարարություններ կատարելու։ Էրշեկուվարի ազատագրումից հետո, սեպտեմբերի 20-ին ինքը վերադարձել է թուրքական երկրից, այսինքն Սերբիայի մայրաքաղաք Բելգրադից²⁰, ապա կրկին անցել է Բուդա և «Գոմորան, որ է Մաճարու երկիր»²¹, որտեղից էլ անցել է Հյանդ²², ապա նույն 1685 թ. հոկտեմբերի 15-ին հասել է Վիեննա, ուր և հաջորդ 1686 թ. հունվարի 15-ին, նույն քաղաքի Ս. Ստեփանոս մայր եկեղեցում պսակադրվել է։ Գաբրիելը զբաղվել է առևտրով, եղել է սեղանավոր (դրամափոխ), դերձակ, նկարիչ։ Վիեննայում հակաօսմանյան շարժման նախաձեռնողներից հայազգի Հովհաննես Դիոդատո խոշոր առևտրականի կողմից Գաբրիելի վերաբերյալ կայս-

17 Հ. Տ ա շ յ ա ն. նշվ. աշխ., էջ 31։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

21 Այն ոչ մի կապ չունի Ռումինիայի Հումոր (այժմ՝ Գուրա Հումորուլույ) քաղաքի հետ (Վ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 406), այլ Հունգարիայի Կոմարոմ քաղաք-ամրոցն է, որը գտնվում է էստերգոմից արևմուտք։

22 Մեզ անհավանական է թվում այն հունական Յանինա կամ ռումինական Անինա քաղաքը համարելը (Վ. Հ ա կ ո բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 408)։ Ըստ Մոլնարի այն պետք է լինի Yeno-ն (նշվ. աշխ., էջ 5)։

րին ներկայացրած զեկուցագրից հայտնի է դառնում, որ նա կոչվել է Գարրիբե-Սարտո, թեև իրեն դերձակ էր կոչում, սակայն շատ երևելի առևտրական էր, բազմիցս եղել էր Լեհաստանում: Գարրիբելը 6000 տալերի փոխառություն էր տվել Սվադի (Սերաստիայի) փաշային, սակայն երբ փաշայից խնդրել է հետ-վերադարձնել այդ գումարը, փաշան սպառնացել է նրան սպանել: Գարրիբելը Պեշտից ևս հարկադրված է եղել փախչել, ուր հիշյալ փաշան ղեկավար դիրք էր զբաղում: Նա անցնում է Բուդա, որտեղից էլ ի վերջո փախչում է ավստրիա-կան բանակատեղին, Լոթարինգիայի հերցոգի մոտ, որն էլ նրան հասցնում է Վիեննա:

Թեև Դիոդատոն Գարրիբելի համար Լեհաստան ուղևորվելու անձնագիր է՝ վերցնում, սակայն նյութական սուղ պայմանների պատճառով վերջինս չկարողացավ գնալ: Վիեննայում թուրքերին ջախջախելուց հետո ավստրիական զորքերը նախապատրաստվում էին հարձակման անցնել Բուդայի վրա: Ինչպես նկատում է Տեպլին, հակաթուրքական ճակատի Վիեննայի հայ գործիչներ Նովհանես Դիոդատոյի և բժիշկ Շահին Նուրվելիի համար այժմ հարց ծագեց գտնել մի մարդու, որին հնարավոր լիներ իբրև հետախույզ ուղարկել Բուդա: Նույն Տեպլիի ընդունմամբ Գարրիբելը, Դիոդատոն և Շահինը ստեղծված էին այդ գործի համար: Եվ այսպես, Վիեննայի ռազմական և քաղաքական շրջանակներում կշիռ ունեցող վերոհիշյալ հայ գործիչները աշխատում են Գարրիբելին ներկայացնել ավստրիական մեծամեծներին և երաշխավորել նրա կարողությունները: Ամեն ինչից հետո որոշվում է նրան ուղարկել Բուդա: Թեև ճանապարհին Գարրիբելին ծեծում են և թալանում, սակայն ի վերջո նրան հաջողվում է Բուդա ներթափանցել: Տեպլին նշում է, որ այդ գործի հաջողության համար ավստրիական մեծամեծները խոստացան տալ ոսկե լեռներ, բայց այդ մարդը պատրաստ էր իր կյանքը զոհել քրիստոնեության համար²³:

Դեռևս 1685 թ. ընթացքում Գարրիբելը կարևոր տեղեկություններ էր հաղորդել Վիեննա: Նա գրել էր, որ թուրքերը էրշեկույվարի պարտությունից հետո շատ են թուլացել և Բուդայի ամրոցի պետ Աբդուռահման փաշան իր հետ խոսել է այնպես, կարծես թե ինքը նրա եղբայրը լիներ ու խնդրել է, որ նա գրի Վիեննա, բժիշկ Շահինին՝ խաղաղության գործը կազմակերպելու համար: Նա նշում էր, որ նման լավ առիթը մեկ անգամ է ներկայանում Օսմանյան կայսրությանը հաղթելու համար: Ա. Մոլնարը գրում է, որ սույն նամակը կարևոր նշանակություն ունեցավ և բացի գերմաներենից թարգմանվեց նաև իտալերենի և ուղարկվեց հակաթուրքական համադաշնակցության անդամ Վենետիկի կառավարությանը: Հավանաբար այն ներկայացված պետք է լիներ նաև Լեհաստանի արքա Յան Սոբեսկուն:

Վերոհիշյալ նամակը արժեքավոր է նաև այն բանով, որ բացահայտում է 1685 թ. ընթացքում Գարրիբելի դարձյալ Բուդայում լինելը, մի բան, որ ինքը իր ժամանակագրության մեջ չէր արձանագրել:

Ըստ Մոլնարի տվյալների, Գարրիբելը իր երկրորդ նամակը Բուդայից ուղարկել էր 1686 թ. սկզբներին. այդ նամակում նա Բուդայի թուրքերի թիվը նշում էր 12000 հոգի: Այս նամակի մասին խոսվում է Վենետիկի դեսպանի գրության մեջ, որի իտալերեն թարգմանությունը ևս ուղարկվել էր Վիեննա-ից Վենետիկ: Հունիսի 13-ին Գարրիբելը մի նոր գրություն է ուղարկել Յանեոյից, որով տեղեկացրել է, որ 600 թուրքական ընտիր սպահիկներ են եկել Բուդա, իսկ հունիսի 28-ին նրա կողմից ուղարկված մի հայ մարդ, Գրիգոր անունով, Վիեննայում զեկուցել է, որ Բուդայի գլխավոր պաշտպան Աբդուռահման փաշան իրեն տեղակալ է նշանակել Իբրահիմ փաշային՝ Բուդայի կարևորագույն կետի՝ թագավորական պալատի՝ պաշտպանության համար: Հայտնի է նաև, որ նույն թագավորական պալատում մոտավորապես

23 «Հանդես ամսօրյա», 1972, № 4—6, էջ 222:

100—120 հունգարացի զերիններ կան: Հիշյալ հաղորդումների մասին դարձ-
յալ խոսել է Վիեննայում գործող Վենետիկի դեսպանը իր գրության մեջ²⁴:
Ըստ երևութիւն 1686 թ. ապրիլի 2-ին Գաբրիելը արդեն պետք է որ կըր-
կին Բուդայում լինել: Համաձայն ավստրիական մի մեծ պաշտոնյայի հետ
ունեցած պայմանավորվածութեան, Բուդայում նրան նախ ընդունեց Գաբա-
յաշ անունով մի առևտրական, որը, հավանաբար, հայ էր: Վերջինս Գաբ-
րիելին ներկայացրեց թուրք մի պաշտոնյայի, որի վրա նա լավ տպավորու-
թիւն թողեց: Ամենայն հավանականութեամբ, մայիսի սկզբից Գաբրիելը
Բուդայում սկսեց իր աշխատանքները: Դրա լավագոյն ապացույցներ են
մնում ներկայումս Վիեննայի պետական դիվանում պահվող հայերեն այն
խոնացած նամակները, որոնք նա գրել էր Վիեննայից Հովհաննես Դիողա-
տոյին: Վերջինս դրանք հանձնում է ներսես վարդապետ Երեանցուն, իսկ
սա էլ, թարգմանելով գերմաներենի, ներկայացնում է Բաղենի մարկգրաֆ
Հերմանին, որն ավստրիական ռազմական խորհրդի նախագահն էր և որն էլ
այդ մասին տեղեկացրել է Լեոպոլդ I կայսրին: Նամակների գաղտնագիր
մասերը տաքացնելու միջոցով ի հայտ բերելու և կարդալու հետևանքով ու-
րոշ եզրեր այրված են և այժմ չեն կարդացվում: Գաբրիելը կասկածելով, որ
կարող են իր նամակները տեղ չհասնել, հարկադրված է եղել հաճախ կրկնել
գրածները:

Գաբրիելի կողմից Բուդայի բերդից Վիեննա ուղարկված հայերեն գաղտ-
նագիր հիշյալ վեց նամակները ցուցադրվեցին Բուդայի ազատագրման երկու-
հարյուրամյակի առթիվ 1886 թ. Բուդապեշտում կազմակերպված ցուցա-
հանդեսում, իբրև այդ դեպքի նշխարներ:

Ինչպես նշեցինք, Կարոլին և Մոլնարը 1886 և 1887 թթ. հիշյալ նամակ-
ները ուսումնասիրեցին և մեծ մասամբ հրատարակեցին հունգարերենով,
սակայն Գաբրիելի ձեռագիր մատյանի մասին նրանք այն ժամանակ ոչինչ
չգիտեին, քանի որ միայն 1891 թ. էր, որ Հ. Տաշյանը հրատարակեց այն:

Ի՞նչ փաստեր կան ինչպես նամակների, այնպես էլ ձեռագիր մատյանի
հեղինակին միևնույն Գաբրիելին համարելու համար: Այժմ այս երկու սկզբը-
նաղբյուրների քննարկումը թե՛ հնագրական և թե՛ բովանդակության առու-
մով աներկրայելիորեն բերում է մեզ այն եզրակացության, որ երկուսի հե-
ղինակն էլ նույն Գաբրիելն է եղել: Այսպես, իր նամակներից առաջինում
ինքը նշել է. «Պահարանըս ծառայ Գաբրիէլ», երկրորդում՝ «ի անարժան Գաբ-
րիէլ», երրորդում՝ «ի անարժան Գաբրիէլէս», նորահայտ յոթերորդ նամա-
կում՝ «ի անարժան և անպիտան և մեղսասէր Գաբրիէլէս», դարձյալ նորա-
հայտ 9-րդ նամակում կա «Գաբրիէլ» անունը: Նրա անունը պահպանված ենք
գտնում նաև իր ինքնագիր մատյանում, ուր մի տեղ իր մասին գրել է. «Ով
Գաբրիէլ դու եղկելի...» ձևով, իսկ մի այլ տեղում՝ «Օտանաւորս վասն գինոյ
և արեցողութեան ասացեալ» չափածոյի վերջում, որը չի հրատարակվել
Հ. Տաշյանի կողմից, նա իր մասին գրել է հետևյալ քառատողը.

Ո՞վ Գաբրիէլ տգէտ իմար,
հրատ կուտաս այլոց համար,
նախ դու բռնէ զասացդ խապար,
Հապայ այլոց խրատոր25:

Այժմ տեսնենք, թե որո՞նք էին այն գլխավոր հարցերը, որոնց անդա-
դարձել էր Գաբրիելը Բուդայի անկմանը նախորդող իր հիշյալ գաղտնագիր
նամակներում: Գաբրիելը իր բոլոր նամակներում էլ անխտիր խոսում է գո-
յութիւն ունեցող ականների գտնվելու վայրի մասին, որոնք այն ժամանակ

²⁴ Molnar Antal. Op. cit., p. 4.

²⁵ Cod Arm. 21.

ստացել էին թուրքական անուններ: Նա հաղորդում էր, որ խորոզ Կապուսիի, Թոփրակ Թապիասիի և (Ֆ)ոնենկի կուլէի մոտ երեքական ականներ կան²⁶:

Գարրիբի կողմից առաջ քաշված կարևորագույն խնդիրներից մեկը Բուդայի բերդի ջրի գրավման և կամ փակման հարցն է եղել, որի վրա հրավիրել է ավստրիական ռազմական խորհրդի ուղադրությունը: Նա գրել է. «Այստեղ ետևին կանեն, թող անեն, ջուրը թող առնեն, ջուրն է բերթին հօլումն ջուրն է, այսպէս պիտուրմիշ եղեք»²⁷, նրա երրորդ նամակը սկսվում է հետևյալ խոսքերով. «Մանուցումն լինայ ձեր հրամանուցըն, ինչ կանեն թող անեն եւ առաջն ջուրն առնեն»²⁸: Ինչպես ճիշտ նկատում է Մոլնարը, ջուր ասելով Գարրիբիը նկատի էր ունեցել Դանուբի փակումը:

Գարրիբիի հաղորդումների մեջ կարևոր էին նաև հարձակման անցնելու և աշտարակը պայթեցնելու կողմը որոշելու հարցերը: Նա առաջարկում էր բերդը պայթեցնել և ապա «իւրիւշ», այսինքն գրոհ կազմակերպել: Նկատի ունենալով, որ բերդում օրական 40—50 մարդ է մեռնում և այժմ քիչ պաշտպաններ են մնացել, Գարրիբիը բազմիցս կոչ էր անում առանց հապաղելու բերդը դրսից պայթեցնելու և Թոփրաք Թապիասիի կողմից գրոհելու մասին և նշում, որ պահը հարմար է. «Մարդն քիչ է, թող չի վախեն, ասոնց սիրտն կոտրեր է ահերոն»²⁹: Իր երրորդ նամակում Գարրիբիը հայատառ թուրքերենով գրում էր, թե Բուդայում տիրող վիճակի մասին մանրամասներ կարող են իմանալ իր բանբեր Դրիգորից:

Գարրիբիի վերջին նամակները նորություններ են պարունակում Բուդայի թուրքական զորքի համալրման վերաբերյալ: Նամակներից դժվարությամբ վերծանվում է, որ երկու հունգարացիներ են եկել Սիգետ քաղաքից փաշայի մոտ և նամակ են բերել, որից հայտնի է դառնում, որ վեզիրը Բելգրադ է եկել և կարծվում է, որ սերասկերը թաթարներով հասնելու է Բուդային օգնության: Նրա վեցերորդ նամակում ավելացված է, որ օգնության է գալու 2000 զինվորով և 2000 թաթարով:

Գարրիբիի գաղտնագիր նամակներում, սակայն, հարցերի հարցը մնում էր Բուդայի բերդի վառողի պաշարները ներսից պայթեցնելու: Գարրիբիի այս կարևորագույն ծրագիրը կարմիր թելի պես անցնում է նրա կողմից ուղարկված բոլոր նամակներում: Նրանցում ի հայտ է գալիս հայազգի հերոսի մեծ-տասնեռումը Բուդան ժամ առաջ ազատագրված տեսնելու մասին, թեկուզ իր կյանքը վտանգելու գնով: Այդ կարևորագույն ծրագիրը գլուխ բերելու համար Գարրիբիը իր ծանոթ թուրք պաշտոնյային 1000 ոսկի էր խոստացել: Գարրիբիը միշտ էլ նշել է, որ առանց ավստրիական բանակի ռազմական խորհրդի գլխավորի կողմից տրված երաշխավորագրի այդ գործը չի կարող գլուխ գալ և գործի ուղացման պատճառը ռազմական խորհուրդն է: Իր երրորդ նամակում նա գրել է, որ «ճեպխանան կրակելու»³⁰ հարցը հետաձգվել է, քանի որ թուրքը վերևից երաշխավորագիր չի ստացել:

Վիեննայից ոչ մի դրական պատասխան չստանալով Գարրիբիը ճարահատյալ ցանկացել է իր կյանքը գրավ դնելով հատուցել նրան խոստացած գումարը. «Ես ասի թէ իմ վիզն թող լինայ ի քեզ՝ 1000 ոսկի տամ», սակայն նրա խոստմանը թուրքը պատասխանել է. «Թէ մինչև վէրէն գիր չլինի, ես չեմ հաւատար»³¹: Թուրքը ասում էր նաև, որ եթե կրակի տա, պետք է որ իրենց հետ փախչի. «Թէ չիտան իմ հալս ինչ կու լինա, կու մնամ մէջն երբ-րուն, իշթէ այս է ուսլն որ չի ուզեր կրակ, ա(սէ), թէ փարէս հիմի ուղարկէք»³²: Նա իր հաջորդ նամակում հիշյալ հարցի մասին գրել է, որ այդ ռու-

26 Հ. Ուկյան. Նշվ. աշխ., էջ 281:

27 Նույն տեղում, էջ 278:

28 Նույն տեղում, էջ 281:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում, էջ 280:

31 Նույն տեղում, էջ 278:

32 Նույն տեղում, էջ 280:

նր» մարկգրաֆից (գրված է Մարկոֆեն) գրություն է ուղղում, իսկ ինքը հավատացրել է նրան, որ ստանալու է: Իր վերջին նամակում նա գրել է, որ թուրքն այլևս չի ուղղում այդ բանն անել, քանի որ Ֆիննի վերջին գիր չեղաթել տեսեր էի, ինձի ինչ կու տային, որ ես ալ այս բանս էնէի»³³: Սակայն գրությունը այնպես էլ չի ստացվել: Գաբրիելը վերջում նշում էր, որ հիշյալ գործի շիրականանալու պատճառը ինքը չէ, այլ մեղքը ավստրիական ռազմական խորհրդինն է:

Գաբրիելը ի վերջո, առանց իսկ սպասվող երաշխավորագիրը ստանալու, կարողացավ համոզել թուրքին և պայթեցնել տվեց Բուդայի բերդի վառողի պաշարները: Լեհահայ մատենագիր Ստեփանոս Ռոշքան իր «Ժամանակագրութեան» մեջ ավետում է Բուդայի բերդի պայթեցման ուրախառիթ լուրը, անշուշտ հիմնվելով վիեննաբնակ ներսես վարդապետ Ծրեանցու պատմածների վրա, որը, նրա ասելով, իր մեծ բարեկամն էր: Ռոշքան գրել է. «Յառնուլն Լէոբուլտի կայսեր զՊուտայ ի Տաճկաց, զՏէր ներսէսն վասն թարգմանութեան թղթի Հայոյ ուրուք, որ ի Պուտայն էր և զհուր ետ Պարութիւն»³³, նշենք, որ «պարութիւն», այսինքն վառողին բառը երկար ժամանակ թյուրիմացության տեղիք է տվել³⁴: Ռոշքայի վերոհիշյալ ասածից երևում է, որ Բուդայից նամակ գրող հայի կողմից պայթեցվել է վառողը..., գրում է հայագետ դոկտ. Մեսրոպ Գ. Գրիգորյանը³⁵, իսկ Հ. Ոսկյանը նշում է, որ հարկ է հասկանալ, «թե նամակագրի պնդումներուն վրա՝ վառողի մթերանոցըն կրակ կտրվի (մահմեդականն մը)»³⁶:

Թե ինչքան քաջատեղյակ էր Գաբրիելը Բուդայի ազատագրության հետ կապված մանրամասներին, այդ պարզ երևում է նրա կազմած ժամանակագրությունից, ուր 1686 թ. սեպտեմբերի 2-ի դիմաց լուսանցքում նա գրել է. «Պո:տիմ» և թողել է հետևյալ նշումները. «Թվոյն 1686 և ի Հայոց ՌՃԼԾ-ին սեպտեմբերի 2 օրն երկուշաբթի կէս օրէն ետոյ Բ (2) ժամուն Նէմցալու ազգն առաւ ի Պուտիմ ի թուրքէն, և էր Պուտիմու մէջն վեզիր Ապաի փաշան, որ յէնիշերի աղայութենէ ելած էր: Եւ ալ Սուլէյման փաշան, որ էր քեահեայ պէկութենէ ելած, և ալ Կիշի Ահմէտ աղան էր քեահեայ պէկի, և էր յէրի յէնիշերի աղասի էր սաքշալի Մէհմէտ աղան, որ մէմի աղա օղլի կասեն իւրեան: Սուլէյման փաշան, Կիշի Ահմէտ աղան և սաքշալի Մէհմէտ աղան գերի եղան և գին տվին ելան: Ապա Ապաի փաշան ըսպանեցին Նէմցաներն յիւրուշ եղած օրն»³⁷:

Ռոշքան նշում է Բուդայից մի հայի կողմից ուղարկված նամակի թարգմանության և վառողը հրկիզելու մասին, սակայն զգուշանում է Գաբրիելի

33 Նույն տեղում:

34 Ստեփանոս Ռոշքայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք. հրատարակեց հ. Համազասպ Ոսկան. Վիեննա, 1964, էջ 188: Իր ժամանակին Ղ. Ալիշանը այս պարբերությունը սխալմամբ հրատարակել է այսպես. «և զհուր՝ ետ պարոնութիւնն» (Կամենից, էջ 145), այսպիսով «պարութիւն» (այսինքն վառողին) թուրքերեն բառը կարդացվել է պարոնություն և նախադասությունը անհասկանալի է մնացել: Այնինչ շատ առաջ Հ. Տաշյանը ճիշտ ձևով էր հրատարակել այն (տե՛ս Հ. Տաշյան. նշվ. աշխ., էջ 12—13): Հիշյալ սխալից էլ Ալպոյաճյանը (տե՛ս նրա Առաքելություն մը ի Հապեշիստան, էջ 66), Հր. Աճառյանը (Անձնանունների բառարան, Գ., էջ 69) և Աշ. Հովհաննիսյանը (Դրվագներ..., Գ. 2, էջ 281) թյուրիմացության մեջ են ընկել, կարծելով, թե ներսես Ծրեանցին պարոնության աստիճան է ստացել կայսրից:

35 Մ. Ե. Ս. Ռ. Կ. Գ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 58, ծան. 88:

36 Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 275: Հ. Ոսկյանը, անդրադառնալով Ստ. Ռոշքայի վերոհիշյալ պարբերության հրատարակությանը, նշել է, որ ինքը «թղթի հայոց» ձևում հետևել է Ղ. Ալիշանին, քանի որ իր ասելով «վերջին տառը շատ ավելի «ց»-ի կնիքների քան «յ»-ի, սակայն Հ. Տաշյանը որոնք պետք էի հետևած ըլլալ, «ուրուք» նկատի առնելով կարդացած է «հայոյ» (Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 275: Հ. Տաշյան. նշվ. աշխ., էջ 13): Տաշյանի ընթերցմանը հետևել է Մ. Գրիգորյանը (նշվ. աշխ., էջ 58), ինչպես նաև մենք:

37 Հ. Տաշյան. նշվ. աշխ., էջ 31:

անունը տալուց: Մյուս կողմից Գաբրիելը արձանագրում է Բուդայի անկման վերաբերյալ զանազան մանրամասներ, որը մոտիկից տեղյակ մեկը կարող էր արձանագրել, սակայն դարձյալ լռում է իր գործունեության մասին: Անշուշտ թե՛ Ռոշթան և թե՛ Գաբրիելը հասկանալի պատճառներով խիստ լռությամբ էին պահում, քանի որ կարող էր վերջինիս կյանքին վտանգ սպառնալ Ռոշթանի կապակցությամբ ասենք, որ իր երկում միայն Գաբրիելի հարցում չէ, որ լռել է, մի այլ տեղում իր նույն աշխատության մեջ գրել է, որ մելիթները Անգեղակոթից 1699 թ. ապրիլի 19-ին Պապին գրություն են ուղարկել, ինքն էլ լատիներենի է թարգմանել այն, իսկ փաստաթղթի ստորագրողների մասին նշել է. «Յորոց անուանսն վասն պատճառի ուռուք լռեմ»³⁸:

Բուդայի վառոդի պաշարների աշտարակը պարունակում էր 8000 ցենտներ վառոդ: Այդ պայթյունից 1500 թուրք էր սպանվել³⁹, Սակայն, ինչպես ցույց են տվել թե՛ էդ. Շյուցը⁴⁰ և թե՛ Տեպլին⁴¹, կասկածներ են առաջացել պայթեցման վերաբերյալ: 1688 թ. հուլիսի 22-ի այդ պայթյունը շատ մեծ ճեղքվածք էր առաջացրել ամրոցի պատի այն կողմում, որը նայում էր դեպի Դանուբ գետը: Բավարացի ջոկատները այդ պայթյունը վերագրեցին իրենց, իսկ ուրիշները այն համարեցին պատահականության արդյունք⁴²: Սակայն, ինչպես երևում է Գաբրիելի նկատմամբ ավստրիական ռազմական խորհրդի կողմից ցույց տրված բացարձակ անտարբեր վերաբերմունքից, հիշյալ պատճառաբանությունների միջոցով նրանք հրաժարվեցին Գաբրիելի կողմից կատարված մեծ գործի դիմաց որևէ հատուցում տալուց: Այստեղ կարեւորն այն է, որ Բուդան՝ թուրքական փաշայության վերածված Հունգարիայի այդ սիրտը, ազատագրված էր, որը շրջադարձային իրադարձություն էր Հունգարիայի վերջին շրջանի շուրջ 150-ամյա պատմության մեջ: Բացի այդ, Եվրոպայի կենտրոնից առհասարակ հեռացվում էր խոշորագույն վտանգը: Ինչպես նշում է էդ. Շյուցը, այդ գործում հասարակ մի հայ՝ Գաբրիելը խաղաց ոչ պակաս կարևոր դեր⁴³:

Նշենք, որ Գաբրիելի հիշյալ նամակների սկզբնամասերը և գաղտնագրված հատվածները ինչպես հրատարակիչ Հ. Ոսկյանի կողմից, այնպես էլ առհասարակ մեր քննարկումից առաջ ուսումնասիրության նյութ չէին դարձել: Անհրաժեշտ է նկատել, որ անգամ Գաբրիելի նամակների չգաղտնագրված սկզբնամասերը կարևոր են իրենց բովանդակությամբ: Այդ հատվածների քննարկումը ևս մեզ բերեց այն եզրակացության, որ դրանք իր գաղտնագիր նամակները ուղարկելու համար սոսկ ձևական հատվածների ընդօրինակություններ չեն եղել: Իրականում հիշյալ լեգալ կերպով գրված աղոթքներն ու սաղմոսները Գաբրիելի կողմից նպատակադրվածորեն ընտրված հատվածներն են, որոնք արտահայտում են նամակագրի ապրած ծանր հոգեվիճակն ու տրամադրությունները: Նա իր մի շարք նամակների սկզբնամասերում ընդօրինակել է հատվածներ Ներսես Շնորհալու օրվա 24 ժամերի համար գրած և 24 տներից բաղկացած «Հաւատով խոստովանիմ» հանրահայտ աղօթքից և մասեր Դավիթ մարգարեի սաղմոսներից:

Գաբրիելի նամակները իրենց լեզվաոճական առանձնահատկություններով արտացոլում են Արևմտյան Հայաստանի կենտրոններից մեկի՝ Շապին Գարահիսարի XVII դարի վերջի խոսակցական հայերենը, որն ուշագրավ է նաև տվյալ ժամանակաշրջանի աշխարհաբարի ուսումնասիրման համար:

Հ. Ոսկյանը Գաբրիելի առաջին նամակի հայերեն բնագիրը չգտնելով, ստիպված էր միայն ֆրանսերեն թարգմանությունը հրատարակել: Նա, նշել

³⁸ Ստ. Ռոշթան. նշվ. աշխ., էջ 190:

³⁹ Molnar. Op. cit., p. 4.

⁴⁰ Эд. Шюц. Указ. соч., с. 10.

⁴¹ Karl Teply. Op. cit., p. 106.

⁴² J. von Hammer. Histoire de l'Empire Ottoman... , t. 12, p. 201.

⁴³ Эд. Шюц. Указ. соч., с. 106.

է, որ հիշյալ ընդհանուր նամակները ֆրանսերեն է թարգմանել գարահիսարցի-կառապետ Գուլումեյանը⁴⁴։ Հարգարժան հայագետ դոկտ. Մեսրոպ Գրիգորյանը մեզ տեղեկացրել էր նախապես, թե չէր կարողացել գտնել առաջին նամակը⁴⁵։ Սակայն շուտով նույն Մ. Գրիգորյանի թանգերի շնորհիվ հնարավոր եղավ հայտնաբերել այն, որը «Երկար պատկաններն ետք վերագրված է իր տեղը, «Հունգարիա», № 427»⁴⁶։

Մեղ հուզող հարցերից մեկն էլ Գաբրիելի կողմից ուղարկված հիշյալ վեց նամակներից բացի դարձյալ նրա կողմից գրված նաև այլ նամակների գոյության խնդրի ստուգումն էր։ Այդ մասին Հ. Ոսկյանը ոչինչ չէր գրել։ Մ. Գրիգորյանի մի երկից մեզ հայտնի էր, որ Գաբրիելի նամակները պահվում են Վիեննայի արխիվի թուրքական բաժնում⁴⁷, այսինքն՝ բոլորովին տարբեր։ Հ. Ոսկյանի կողմից հրատարակված Գաբրիելի նամակների թղթապանակից։ Մ. Գրիգորյանի բարյացակամության շնորհիվ պարզվեց նաև, որ հիշյալ վեց նամակներից բացի նույն 1686 թ. հունիսի 18-ին Բուդայի հայ հերոսը գրել է նաև այլ մի նամակ, որ Գաբրիելի ինքնաձեռագիրն է և կրում է նույն 1686 թ. հունիսի 18 թվականը։ Սակայն այս նորահայտ նամակում ավելի որոշակի կերպով նշված է, որ Բուդայի բերդի անկումը կամ ջրից և կամ էլ ականից է լինելու։ Այն դարձյալ ուղղված է Դիոդատոյին և նշված են Վիեննայի ավստրիական ռազմական խորհրդի նախագահ Հերմանի և իր Գաբրիելի անունները։

Վերահիշյալ հայտնաբերումից հետո հարց առաջացավ այն մասին, թե արդյո՞ք նշված թղթապանակում Գաբրիելից այլ նամակներ ևս պահվում են, թե ոչ։ Դարձյալ շնորհիվ հայագետ Մեսրոպ Գրիգորյանի, ի վերջո պարզ դարձավ, որ այստեղ գտնվում են նաև Գաբրիելի գրած յոթ նամակներ ևս։ Դրանց մեծ մասը թեև դժվար ընթերցելի է, սակայն հետազոտում, վերծանվելուց հետո, հրատարակվելու են հայտնաբերող հայագետի կողմից։ Այսպիսով, Գաբրիելի կողմից Բուդայից Վիեննա ուղարկված նամակների թիվը եղել է ոչ թե վեց, այլ՝ 14։

Նորահայտ հիշյալ գաղտնագիր նամակների մասին մեր ստացած նախնական տվյալներից դատելով, ամենաուշագրավը 14-րդ նամակում եղած հետևյալ պարբերությունն է. «Հասնի գիրս Յոհաննէս Չէլէպուն, որ հասուցանէ Հերծուկին»։ Սա մեզ հայտնի առաջին նամակն է, որ ուղղված չէ ավստրիական ռազմական խորհրդի նախագահ Հերմանին, այլ տարբեր անձնավորության։ Կարո՞ղ էր Գաբրիելը հերցոգ ասելով հասկանալ նույն Հերմանին. ոչ, քանի որ, նախ, այստեղ նրա անունը բացակայում է և երկրորդ՝ իր հինգերորդ նամակում նրան հիշում է իբրև մարկգրաֆ։ Մեր հետազոտությունները հանգեցրին այն եզրակացության, որ հակաթուրքական պատերազմների ընթացքում ավստրիական գործող զորքերի հրամանատարը թե՛ Վիեննայում, թե՛ Բուդայում, ապա նաև Մոդայում և այլն, եղել է Լոթարինգիայի հերցոգ Կարլը։ Նրա հետ թե՛ Գաբրիելը և թե՛ Դիոդատոն հին ժանոթներ են եղել։ Գաբրիելը նրան հիշատակում է դեռևս իր ժամանակագրությունում, էրշեկուլվարի հաղթանակի առթիվ՝ 1685 թ. սեպտ. 12-ին, գրելով. «Եւ էր նէմցալու սէրրազգէրն Տուքա Տ'Լորէնըն, որ հերծուկ կասէին ալամանակ»⁴⁸ և սույն հերցոգի միջոցով է, որ Գաբրիելը Բուդայի ազատագրումից առաջ Վիեննա էր տարվել։ Դիոդատոն էլ մի այլ հայի հետ դարձյալ Բուդայի հարցով եղել էր նրա բանակատեղում։ Այս կարևոր նորահայտ փաստի շնորհիվ՝ այժմ մեզ հայտնի է դառնում, որ Գաբրիելը նամակներ է ուղարկել նաև գործող ավստրիական զորքերի հրամանատարությանը։ Արժե այս առթիվ

44 Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 275։

45 Դոկտ. Մ. Եպիսկ. Գրիգորյանի 1976 թ. հունիսի 16-ի նամակից։

46 Մ. Գրիգորյանի 1976 թ. հունիսի 30-ին մեզ գրած նամակից։

47 Մ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 58։

48 Հ. Տաշյան. նշվ. աշխ., էջ 31։

նկատել, որ այժմ մեզ հայտնի դարձած 14 նամակներից յոթում, եթե հիշվում է ռազմական խորհրդի նախագահի անունը, ապա միայն մեկում է, որ կա հերցոգի հիշատակությունը, մնացյալ յոթ նամակներում, բացի Դիոդատոյից, ոչ մի անուն չի գրված՝ ըստ Մ. Գրիգորյանի մեզ տրամադրած տրվյալների:

Գաբրիելի վերոհիշյալ նորահայտ նամակների հրատարակումը ճանաչողական կարևոր նշանակություն կունենա Բուդայի ազատագրման առիթով հայազգի հերոսի ծավալած գործունեության պատմությունը ամբողջացնելու և արժեքավորելու առումով:

Բուդայի ազատագրության ժամանակ Գաբրիելը ևս գտնվում էր թուրք գերիների շարքում, սակայն Դիոդատոյի անմիջական միջամտությամբ նա ազատվեց: Սակայն հետագա փաստերը աներկբայիորեն վկայում են, որ Գաբրիելի անձնագրի գործը բոլորովին էլ չգնահատվեց ավստրիական իշխանությունների կողմից: Ընդհակառակը, մի կողմից Գաբրիելի ու հիշյալ վիեննաբնակ հայ մերձավորների միջև ծագած վեճերը, իսկ մյուս կողմից ավստրիական իշխանությունների ցուցաբերած անտարբերությունը պատճառ դարձան, որ հայ հերոսը խրվի պարտքերի մեջ և անգամ բանտարկվի:

Գաբրիելի միջոցով Բուդայի վառողի աշտարակը հրկիզելու և պայթեցնելու փաստի մասին վկայել են թուրք գերիները: Հայտնի է դառնում նաև, որ այն պայթել է ոչ թե դրսից ումբ ընկնելու հետևանքով, այլ բերդի ներսից կրակ է տրվել նրան: Հաստատվում է, որ Գաբրիելը կապերի մեջ է եղել Բուդայի բերդի վառողի պահակների հետ: Սակայն հակառակ այդ բոլորին, նրան անհրաժեշտ վարձատրություն չտրվեց: Գաբրիելի և Դիոդատոյի միջև ծագած անհամաձայնությունը ավելի է վատթարացնում դրությունը: Պարտքերի մեջ խրված Գաբրիելին 1689 թ. յոթ շաբաթով բանտարկում են և ծանր աշխատանքի են ուղարկում Ռաբի բերդում, իսկ նրա ընտանիքը թըշվառ դրության մեջ է ընկնում:

Տեպլին⁴⁹ և Հ. Ոսկյանը⁵⁰ Գաբրիելի հետքեր են գտնում նաև 1672, 1694 և անգամ 1709 թթ.: Ոսկյանը նրան նույնացնում է Կ. Պոլսում գործող գրիչ ում Գաբրիելի հետ: Սակայն թե՛ Տեպլինի և թե՛ Հ. Ոսկյանի հիշյալ կարծիքները համոզիչ չեն թվում: Իրականում նրանք չեն նկատում, որ Գաբրիելի կյանքի հետագա շրջանի ուսումնասիրության համար լավագույն և ամենահավաստի սկզբնաղբյուրն իր հիշյալ ինքնակենսագրական բնույթի ժամանակագրությունը և իր մատյանի տարբեր տվյալներն են:

Հայ-հունգարական կապերի պատմության համար ոչ պակաս ուշագրավ են նաև Գաբրիելի կողմից Բուդայի ազատագրումից առաջ և հետո հունգարական քաղաքների ազատագրման նկարագրությունները: Այս առումով արժեքավոր են Գաբրիելի գրառումները 1686—1691 թթ. ավստրիական բանակների առաջխաղացումների մասին: 1686 թ. Գաբրիելը արձանագրել է նաև հունգարական Պեյ, Շքլովուշ և Կապուշվար քաղաքների ազատագրումը, իսկ 1687 թ. օգոստոսի 25-ին՝ Օսեկի և Փոճոդայի ազատագրման փաստը: 1686 թ. նա գրել է հունգարական էգեր հերոսական ամրոցի ազատագրման մասին, արձանագրել է նաև Պոժոնի (Բրատիսլավա) և Բելգրադի, իսկ 1689 թ.՝ Սեգետվարի, 1691 թ. Կանիժայի և Վարադի (այժմ՝ Օրադեա-Մարե. Տրանսիլվանիա, Ռումինիա) ազատագրումը: Գաբրիելը ամեն տեղ նշել է նաև հաղթական զորավարների անունները: Իր ձեռագրերում նա չի մոռանում գրել նաև Թուրքիայի սուլթանների փոփոխման մասին և նշում է ներանց գահակալության տարիները՝ 1687—1694, սուլթան Մեհմեդից մինչև սուլթան Մուսթաֆան⁵¹:

⁴⁹ Karl Teply. Op. cit., p. 238.

⁵⁰ Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 278:

⁵¹ Հ. Տաշյան. նշվ. աշխ., էջ 81:

Գաբրիելի ձեռագիրը, բացի ժամանակագրությունից և այլ նյութերից, ուշագործյալն արժանի է նաև իր նկարագրողականերով, որոնցից էլ երևում է, որ նա եղել է նաև նկարիչ: Դրա համար էլ Հ. Տաշյանը նրան անվանել էր «գրիչ և նկարիչ»: Նրանից շատ ավելի ուշ պատմաբան Ա. Ալպոյաճյանը Գաբրիելին նվիրած իր հոդվածը վերնագրել էր՝ «Թոքաթցի Գաբրիել նկարիչը»⁵², սակայն ձեռքի տակ շունենալով այլ տվյալներ, բացի Հ. Տաշյանի ցուցակից, բնավ չի անդրադարձել նրա նկարներին: Այժմ, երբ մեր տրամադրության տակ է գտնվում Գաբրիելի հիշյալ ձեռագրի մանրաթափանց, առաջին անգամ մեզ հնարավորություն է տրվում տեսնելու նրա նկարչական գործերը, որոնք հետաքրքրական են XVII դարի վերջի հայ գաղթավայրերի գեղանկարչության ուսումնասիրության համար և արժանի հետագա հետազոտման: Գաբրիելն իր նկարները պատրաստել էր Վրոցլավ կամ Բրեսլաու քաղաքում, որը շատ քիչ է հայտնի հայ գաղթավայրերի պատմության մեջ:

Նշանակալից է այն իրողությունը, որ Բուդայի ազատագրության գործում այլ հայեր ևս իրենց լուման են մոծել:

Ինչպես վերևում նշվեց, Գաբրիելը իր Վիեննա ուղարկած գաղտնագիր բոլոր նամակներն էլ հասցեագրել էր առևտրական և ոսկերիչ, ազգությամբ հայ Հովհաննես Դիոդատոյին: Ըստ Տեպլի, Դիոդատոն իր հարազատների հետ գաղթել էր Կ. Պոլսից Վիեննա: Նա ոչ միայն Վիեննայի հայերի նահապետն էր համարվում, այլև Վիեննայի ռազմական խորհրդի կարևորագույն գործակալը 1683—1686 թթ. Օսմանյան կայսրության դեմ մղված պատերազմների ընթացքում: Նրա անունը հայտնի է եղել Ավստրիական կայսրության սահմաններից դուրս: Նախապես Դիոդատոն գործել է Հաբսբուրգյան Հունգարիայում, Բուդայում և Բելգրադում: Կայսերական զորքերի հաջողությունների հետ միասին, նա իր առևտրի ոլորտում ընդգրկում է Վերին Հունգարիան (Զիպս), Տրանսիլվանիան և այլ վայրեր: Գաբրիելը իր գաղտնագիր 4-րդ նամակում Դիոդատոյին է նվիրել աստվածաշնչական պատկերներով զրկված մի շափածո⁵³: Դարձյալ Դիոդատոն էր, որ դեռևս 1678 թ. Ավստրիական իշխանությունների հետ ծանոթացրեց նաև Բուդայից Վիեննա տեղափոխված հայ բժիշկ Շահինին: Փաստերը վկայում են, որ բացի Գաբրիելից Բուդայի պաշարման ժամանակ այնտեղ գտնվել են նաև այլ հայեր, որոնք ամենայն հավանականությամբ կապի մեջ պետք է լինեին դրսի իրենց հայրենակիցների հետ: Ըստ Տեպլի, հուլիսի 16-ին Գաբրիելի ուղարկած նամակներից հետո մի հայ կրկին նամակ է բերում Լոթարինգիայի հերցոգին և վերադառնում: Այս քայլով հավանական է նկատվում, որ հայերը դիմադրության ստեղծման միջոցով կամեցել են փրկել իրենց ազգակիցների կյանքը և ունեցվածքը: Սակայն երբ Բուդան ազատագրվեց, հակառակ Դիոդատոյի բոլոր փորձերի՝ մուտք գործող զորքերից պաշտպանել իր հայրենակիցներին, նրան քիչ բան հաջողվեց, քանի որ շատ հայեր ջարդվեցին, իսկ ոմանք էլ գերության քշվեցին⁵⁴, որոնց մեջ էր գտնվում նաև Գաբրիելը: Դիոդատոյին հաջողվեց Գաբրիելի հետ ազատել նաև ուրիշ հայ գերիների: Սակայն Բուդայում սպանված և գերված հայերի թվի և անձնավորությունների մասին տեղեկություններ մեզ չեն հասել:

Ինչպես ցույց են տվել Ա. Կարոլին և Ա. Մոլնարը, ռազմական խորհրդի նախագահ Հերմանը մինչև Բուդայի ազատագրությունը շատ բան էր իմացել Դիոդատոյից Բուդայում գտնվող թուրքերի մասին: Նույն Դիոդատոն 1686 թ. Լեոպոլդ կայսրին մի գրություն էր ուղարկել, որը պահվում է Վիեննայի պետական արխիվում:

Բուդայի ազատագրությանը սատարողներից էր նաև հայազգի բժիշկ Գալուստ Նուրվելին, որ հայտնի էր իր Շահին անունով: Նա 1678 թ. Բուդա-

⁵² Ա. Ալպոյաճյան. Գաբրիել Թոքաթցի.— «Զարթոնք», բացառիկ, 1962: Գաբրիելի ձեռագրի մանրաթափանց, նամակների լուսապատճենները մեզ է տրամադրել հայագետ Մեսրոպ եպ. Գրիգորյանը, որին հայտնում ենք խորին շնորհակալություն:

⁵³ Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 279:

⁵⁴ Karl Teply. Op. cit., p. 232.

յից անցել էր Վիեննա, կարևոր կապեր էր ունեցել ինչպես Բուդայի Արդու Մահման փաշայի, թուրքական դիվանի, այնպես էլ Վիեննայի ռազմական խորհրդի նախագահ Հերմանի հետ: Հայ բժշկի կապերը Բուդայի թուրք դեկավարների հետ կարևոր էին ավստրիական դեկավարության համար: Նա Վիեննայում աշխատում էր իբրև բժիշկ և քիմիկոս: 1682 թ., երբ մի դեսպանություն է գնում Վիեննայից Կ. Պոլիս Դիոդատոսի մասնակցությամբ, Շահինին են վստահվում Բուդա ուղևորություն կատարելու և թուրք դեկավարների հետ կապեր հաստատելու պարտականությունները: Նա երկար ժամանակով մնում է Բուդայում և շատ արժեքավոր նյութեր է բերում իր հետ: Շահինը նամակներ էր ստանում Բուդայում ապրող իր եղբայր Վարդանից, որոնք վերաբերում էին դարձյալ Բուդայում գտնվող թուրքական զորքերին: Վարդանը նույնիսկ Բուդայից գալիս է Վիեննա և վեզիրի հանձնարարությամբ բանակցություններ վարում, սակայն ամեն ինչ անարդյունք է մնում: Այս գործում Շահինը փորձում է օգտագործել նաև իր որդուն, որն ապրում էր Բելգրադում, սակայն ինչ-ինչ պատճառներով նա սպանվում է: Մոնարխի տվյալների համաձայն Գաբրիելը նշել է, որ Բուդայի թուրքերը շատ հույսեր էին կապել Շահինի ուղարկած նամակների հետ: Պետք է կարծել, որ այդ նամակները վերաբերում էին դարձյալ Բուդայի հանձնման բանակցություններին, սակայն այժմ, երբ թուրքերի ուժերը շատ էին թուլացել, Գաբրիելի կարծիքով արդեն որևէ բանակցություն ավելորդ էր դառնում⁵⁵:

Հաջորդ հայ ակնաւոր գործիչը, որ կարևոր դեր կատարեց Բուդան ազատագրելու գործում, Ներսես վարդապետ Երևանցին էր: Նա գերմաներենի էր թարգմանում այն գաղտնագիր նամակները, որ Գաբրիելը Բուդայից ուղարկում էր Վիեննա, Դիոդատոսին և հանձնում էր դրանք Վիեննայի ռազմական խորհրդին: Ռոջբայի տվյալների համաձայն, ժամտախտի ժամանակ իր ցուցաբերած անձնազոհ վերաբերմունքի համար Ներսեսը Վիեննայի եպիսկոպոսի կողմից, ս. ժողովի թույլտվությամբ, նշանակվել էր Ս. Ստեփանոս Նախավկայի աթոռանիստ տաճարի ժառանգավոր աթոռակալ, իսկ ապա Բուդայի ազատագրությանը ցուցաբերած օգնության համար կայսրը նրան նըշանակել էր կայսերական պալատի մատրանապետ և Ս. Ստեփանոս տաճարի կանոնիկոս⁵⁶:

Լեոպոլդ կայսեր կողմից Ներսես Երևանցու նկատմամբ ցուցաբերված վերոհիշյալ բարձր գնահատականը ինքնին հաստատում է, թե ինչպիսի կարևոր դեր ունեցան Գաբրիելի ուղարկած գաղտնագիր նամակները Բուդայի ազատագրության գործում և ինչքան ապերախտ գտնվեցին ավստրիական իշխանությունները հայ հերոսի հանդեպ: Թեև Ներսեսը հարել էր կաթոլիկության և, իբրև արքայական պալատի մատրանապետ, լատինաժես արարողություններ էր մատուցում ավստրիացիների համար, սակայն նա երբեք չմոռացավ իրեն ծնող ժողովրդին և հետագայում ևս հիշվում է Հայաստանի անկախության ջատագով գործիչների շարքում:

Բուդայի ազատագրությանը իրենց մասնակցությունն են բերել նաև հայ աշխատավոր խավերի բազմաթիվ ներկայացուցիչներ: 1687 թ. հրատարակված Ֆրանսերեն մի գրքում 1686 թ. հուլիսի 16-ի վերաբերյալ նշված է. «Հայ մը, որուն կինն ու զավակները Վիեննա կը գտնվին, Պուտային փախչելով եկավ լուր տվավ, թե ենիչերիները երկու անգամ փաշային պահանջած էին, որ քաղաքը հանձնե, բայց տեսնելով, որ փաշան համամիտ չէր իրենց, հայտարարած էին, թե ատեն մըն ալ պիտի շարունակեն դիմադրել, բայց ոչ մինչև վերջին վայրկյանը: Ավելցուց, թե պաշարյալները մեծ կորուստ կրած էին 13-ի կռիվին մեջ, թե անձնատուր եղած պիտի ըլլային, եթե (հարձակվողները)⁵⁷ կրցած ըլլային (բերդին մեջ բացած) խրամատին վրա մնալ, թե

⁵⁵ Molnar Antal. Op. cit., p. 4.

⁵⁶ Ստ. Ռոջբա. Նշվ. աշխ., էջ 188:

⁵⁷ Փակագծերում բերվող այս և հաջորդ բառերը ավելացված են այժմ հանգուցյալ հայագետ Հ. Պերպերյանի կողմից, բնագրի իմաստը լուսաբանելու համար:

իրենց ամբուսթյանց հարևար եթե (ներսինները) այսքան լավ կռված էին, պատ-
ճառը այն էր, որ դասալիք մը եկած իրենց լուր տված էր, թե հարձակման
որոշում տրված էր, բայց զինքը լրտես նկատելով գլխատել տված էին, ինչ-
պես որ գլխատել պիտի տային ամեն անոնք, որ անձնատուր պիտի ըլլային,
թե սկսած էին ձիեր ուտել, որովհետև ոչ խոտ կար և ոչ ալ ուրիշ միս, թե
մեկ օրվան բավելիք հացը մեկ էռուլի⁵⁸ կը ծախվեր և թե սպանիացի ճար-
տարագետին ռումբերը զոր (թուրքերը) «երկինքի կրակ» կկոչեն, նկուղնե-
րուն կամարները կծակեին» (էջ 99—100):

Նույն գրքում (էջ 139—140) օգոստոսի 29-ի վերաբերյալ գրված է.
«Քանի մը փախստական հայեր եկան լուր տվին, թե հարձակման օրը ավելի
քան հազար հոգի այր, կին և մանուկ սպանված էին քաղաքին մեջ. թե բազ-
մաթիվ մարդիկ ուզած էին գետակի ճամբով փախչիլ, բայց բոլոր նավերը
շղթայով կապված գտած էին, թե կայազորը այլևս միայն հազար ռաղմիկե
կրակակնար և թե մյուսքին զանոնք կհորդորեր առանց ժամանակ կորսնե-
ցնելու անձնատուր ըլլալ, բայց փաշան զանոնք կոգնորեր մինչև վերջը դի-
մադրել, հուսալով, որ օգնական զորքը, որուն կապասեր կհասներ, թե ամեն
տեղ ամբուսթյաններ և շերտափակ փոսեր կային և թե որոշած էին վերջին
վայրկյանին վառողի մթերանոցը կրակի տալ, քաղաքը օդը հանելու համար,
բոլոր բնակիչներով միասին»⁵⁹, 1886 թ. ինսքրուկում հրատարակված գեր-
մաներեն մի գրքում⁶⁰ ֆրանսերեն գրքից կատարված վերոհիշյալ մեջբերում-
ներին գրեթե համանման տողեր կան Բուղայի ազատագրությանը հայերի
մասնակցության վերաբերյալ:

Սակայն դեռևս չէր վերացվել Օսմանյան կայսրության տիրապետություն-
նը բովանդակ Հունգարիայում և Տրանսիլվանիայում: XVII դարի վերջին քա-
ռորդում տեղի ունեցող ավատոր-թուրքական պատերազմները համընկել էին
1672—1680-ական թթ. Մոլդովայից դուրս եկած և Տրանսիլվանիայում ա-
պաստան փնտրող մեծ թվով հայերի գաղթին: Փաստերը վկայում են, որ
Տրանսիլվանիայում հանգրվանած հայերը ևս, տեղում ապրող այլ ժողո-
վուրդների հետ գործուն մասնակցություն են ցուցաբերել թուրքերի դեմ մղե-
ված անհավասար կռիվներին: 1697 թ., երբ օսմանյան զորքերը հարձակվե-
ցին Տրանսիլվանիայի Բիստրիցա քաղաքի վրա, հայերը ևս քաջաբար դի-
մադրություն ցույց տվեցին թուրքական զորքերին. սակայն քաղաքն ընկավ
թուրքերի ձեռքը, հայերի մի մասը զոհվեց կռվում, իսկ մյուս մասն էլ գեր-
վեց⁶¹: Դարձյալ 1697 թ., երբ թաթարները արշավում են Ռադնայի կիրճի
վրա, Բիստրիցայի հայերը իրենց հոգևոր առաջնորդ Օքսենտ վարդապետ
Վրդարյանի գլխավորությամբ թաթարներին ջարդ են տալիս⁶²: Մ. Բժշկյանի
կողմից XIX դարի սկզբին Գրիգորիոպոլսի Ս. Գր. Լուսավորիչ եկեղեցուց
գտած ձեռագիր մի հիշատակարանից երևում է, որ դեռ 1694 թ. թաթարները,
սպառնալով Տրանսիլվանիայի հայերի ամենափոքր կենտրոն Չիկ Սեպ-
վիզը (այժմ Ֆրումոսաս), «գերեաց լուսաւորչադաւան հայկազան ազգն ժո-
ղովրդով—քահանայով...»: Գերված հայերի ընդհանուր թիվն է եղել 148

⁵⁸ Արծաթյա դրամ, որի արժեքը տարբեր ժամանակներում փոփոխված է, ըստ Հ. Պերպեր-
յանի:

⁵⁹ Ա. Ալպոյան. Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1061—1062: Հայկ Պերպերյանի
հոգովածը. «Ապագա», Փարիզ, 1947, հուլիսի 9, հմմտ. Devise. Histoire du Siège de Bu-
de. A Lyon, chez Thomas Amambry, MDCLXXXVII. Avec un plan de Bude, pp. 99—100,
139—140.

⁶⁰ Ziegler (von) Dr. Ferdinand. Die Befreiung Ofens von der Türkenhe-
rschaft 1686, 119—121, հմմտ. Հ. Ոսկյան. Նշվ. աշխ., էջ 271:

⁶¹ Chr. Lukacs. Historia Armenorum Transsilvaniae. Viennae, 1859, p. 18.

⁶² Հրաչ Սարգիս Ռշտունի. Ակնարկ մը Հունգարիո հայոց անցյալին վրա,
Տրանսիլվանիո հայ գաղութը.—«Արևմուտք», Փարիզ, 1947, մարտի 23:

հոգի⁶³։ Հայտնի է նաև, որ նույն շրջանում Տրանսիլվանիայի հայ կաթոլիկ եկեղեցու հոգևոր առաջնորդ Օքսենտ (Ավքսենտ) Վրզարյանը, որ հետագայում հիմնադրեց Գեուլա հայաքաղաքը, երկրում կատարած իր շրջագայությանն ենթարկեց ընթացքում գերի ընկավ թուրքերի ձեռքը և երեք տարի խեղճության մեջ իր կյանքն անցկացնելուց հետո, Կարլովիցի 1699 թ. հունվարի 26-ի հաշտության պայմանագրի շնորհիվ ազատվեց⁶⁴։

Ժամանակի հայ հասարակական մտքի դիրքորոշումը քաջահայտելու առումով արժեքավոր են նաև աստանդական հայ գրիչների գրառումները Նվարոպայում տեղի ունեցող հակաօսմանյան պատերազմների, մասնավորապես Հունգարիայի ազատագրության վերաբերյալ։ Դեռևս լույս չեն տեսել XVII դարի վերջին վերաբերող ձեռագիր հիշատակարանները։ Այդ պատճառով էլ մենք ստիպված էինք արդարապես նույն XVII դարի վերջին քառորդին վերաբերող ինչպես Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի հարյուրավոր ձեռագրերը, այնպես էլ տարբեր մատենադարանների ձեռագրացուցակներով մեզ մատչելի եղող հիշատակարանները։

1689 թ. էջմիածնում իր ընդօրինակած Հայսմավուրքում գրիչ և ծաղկող Գրիգոր Երևանցին, նշելով քրիստոնյա բանակների հաղթանակների մասին, ավելում էր ցնծությամբ. «Առին զմայրաքաղաքն Ընկուղաց զՊուտիմ»⁶⁵։ 1691 թ. դարձյալ էջմիածնում գրված ձեռագրի ստացող, Մակուի Թադեոս առաքյալի վանքի վանահայր Իսահակ վարդապետը նշել է. «ԶԲուղում մայրաքաղաք՝ Օսմանցուց» առնելու և ապա Բելգրադը և նրա շրջակա բերդերը գրավելու մասին⁶⁶։ 1691 թ. Կ. Պոլսում ընդօրինակված ձեռագիր ավետարանի գրիչը նշում էր, որ ավստրիական զորքերը ազատագրել են «զՊուտիմ և զՊէլիկրատ և զՆիշ մինչև ի Սօֆիա»⁶⁷։ XVII դարի վերջին Զաքարիա Քանաբեուցի պատմիչը արձանագրել է. «Առին Ֆռանգքն զՊուտան քաղաք, և հարկատու արարին զՏաճիկսն»⁶⁸։ XVIII դարի անանուն մի ժամանակագիր գրել է. «Դարձեալ յետ առին զմեծ քաղաքն Պուտիմ ազգա Ընկուղաց»⁶⁹։ Ուշագրավ է, որ ի տարբերություն մյուս բոլոր հայ հեղինակների, այս անանուն ժամանակագիրը Բուդայի ազատագրումը համարում է կատարված ոչ թե ավստրիական զորքերի միջոցով, այլ հունգարացիների ձեռքով և Բուդան ճանաչում է իբրև մեծ քաղաք։ Հավանաբար, հայ ժամանակագիրը հունգար զորքերի մասնակցության մասին տեղեկություններ պետք է քաղած լիներ հայ ուղևորներից։ Հայ հեղինակը, այդ մեծ քաղաքը համարելով իբրև Հունգարիայի անբաժանելի մաս, նրա ազատագրումից հետո այն վերադարձված է համարել նույն Հունգարիային։ Գաբրիել Այվազովսկին իր «Պատմութիւն օսմանեան պետութեան» գործի երկրորդ հատորում հանգամանալից կերպով անդրադարձել է Հունգարիայի և Բուդայի ազատագրությանը, ի վերջո գրելով. «Առին զմեծն Պուտին, և զդիմակացսն ի հուր և ի սուր մաշեցին»⁷⁰։

Այսպիսով, բախտի բերումով Հունգարիայում և Ավստրիայում ապաստան գտած բազմաթիվ հայեր, իրենց մասնակցությունը բերելով Հունգարիայի ազատագրման գործին, հավատացած են եղել, որ դրանով միաժամանակ սաշտարելու են նաև իրենց հեռավոր հայրենիքի ազատագրությունը։ Նրանք լա-

63 Մ ի ն ա ս Բ ժ շ կ և ա ն ց. Զանապարհորդութիւն ի Լեհաստան..., Վենետիկ, 1830, էջ 201։

64 Գ. ր. վ. Գ ո վ ը ի կ յ ա ն. Գրունտիլուանիոյ Հայոց մետրապոլիսը կամ նկարագիր Կերլա հայաքաղաքի ի գիր և ի պատկերս. Վիեննա, 1896, էջ 195։

65 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1512, էջ 557—560։

66 Նույն տեղում, ձեռ. № 3912, էջ 344ա։

67 Հ. Ո ս կ յ ա ն. Գարթալի Ս. Նշան եկեղեցվույն հայերեն ձեռագիրները.— «Հանգես ամսօրյա», 1966, էջ 324—325։

68 Զաքարիայ սարկավազի Պատմութիւն. հ. 3, Վաղարշապատ, 1870, էջ 109։

69 Վ. Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Նշվ. աշխ. էջ 327։

70 Պատմութիւն օսմանեան պետութեան, յօրինեաց. Հ. Գաբրիել վ. Այվազովսկի. հ. Բ, Վենետիկ, 1841, էջ 1978։

վագույն կերպով գիտակցում էին, որ Օսմանյան կայսրության կրած ամեն մի հարված նախադրյալներ է ստեղծում նաև սեփական ժողովրդի ազատագրության համար:

Հունգարիային, բայց և միաժամանակ Հայաստանին ծառայելու միտումն ենք տեսնում ամենից առաջ վերոհիշյալ հայազգի մեծ դիվանագետ Պետրոս Ապետիքի երկարամյա գործունեության մեջ: Նույնը տեսնում ենք նաև Վիեննայի և Բուդայի ազատագրությանը աջակցող Ներսես վարդապետ Նրևանցու ջանքերում: Ներսեսը Վիեննայում ոչ միայն սատարեց Թովմաս Վանանդեցու լուսավորական գործունեությանը և այդպիսով համախոհ դարձավ ազատատենչ տպագրիչի գաղափարներին ու դրանով աշխատեց նպաստել հայրենիքի լուսավորության գործին, այլև աջակցեց հայ պետականության վերականգնման գաղափարի մեծ ռազմիրա Դսրայել Օրոնի՝ ավստրիական արքունիքի հետ ունեցած հարաբերություններում: 1699 թ. ապրիլի 19-ին մելիքների կողմից Հռոմի պապին ուղղված մի փաստաթղթից (որն այժմ պահվում է Վատիկանի դիվանում) Օրոն իբրև աջակիցներ են հիշվում Մինաս և Ներսես վարդապետները⁷¹: Ամենայն հավանականությամբ, Բուդայի հերոս Գաբրիել Շապինգա-րահիսարցին ևս իբրև մեկը, որ մոտիկից ականատես էր եղել ինչպես հայրենի բնօրրանում, այնպես էլ գաղթավայրերում իր հայրենակիցների կյանքին, պետք է որ զբաղված լիներ նաև իր սեփական ժողովրդի ազատագրության հարցերով: Կարելի է կարծել, որ նա, երկար ուղևորություններ կատարելով եվրոպական երկրներում, կապի մեջ պետք է լիներ բազմաթիվ ղեկավար դեմքերի հետ: Գաբրիելը Ավստրիայի կայսրին համարում էր բոլոր թագավորների մեծագույնը: Նա իր շափածո գրվածքում արտահայտելով իր հույսերը կայսրի ձեռքով թուրքական տիրապետությունից ազատվելու մասին, գրել է.

...Ինքն փրկե՛ք իստոնեայքն ի յազգէն այս մահմետական,
 Եւ մերձ է անհաւատից երկրի, սորա բերդքն, քաղաքն, գաւառքն ամենայն,
 Կու պատերազմին միմեանց ամառ ձմեռ տարածամ:

Գաբրիելը, իր նշումների համաձայն, 1693 թ. օգոստոսի 15-ից մինչև 1694 թ. մարտի 15-ը, այսինքն ուղիղ 7 ամիս, մնացել է Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում և ապա անցել Լվով, ուր դարձյալ երկար մնալուց հետո, դուրս է եկել հայկական այդ կենտրոնից 1696 թ. մայիսի 5-ին: Ինչպես միշտ, իր ժամանակագրության այս մասում ևս Գաբրիելը հակիրճ է և զուսպ: Պետք է կարծել, որ այդքան երկար մնալով Լեհաստանում, նա պետք է որ կապի մեջ լիներ Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկու հետ, որը Թուրքիայի թիկունքում հայկական ուժեղ պետություն կազմելու հատուկ ծրագիր էր հղացել և բազմաթիվ հայ գործիչների էր օգտագործել: Գաբրիելը մի այլ էջում իր նկարած թագավորական մի թագի տակ արձանագրել է Լեհաստանի արքա Յան Սոբեսկու մահվան մասին և նշել նրա հետնորդներին⁷²: Գաբրիելը Ռուսաստանի հետագա հզորացումը նկատի պետք է ունեցած լիներ, երբ 1697 թ. ներքո գրել է. «Մոսկովիո թագաւորն առաւ Ազախ վէրայով և ի Հայոց թվոյն ՌՃԽԷ (1698) յունվարի Լ(30)» (պետք է լինի 1696 թ.): Այլ պետություններին նվիրած մի ոտանավորում Ռուսաստանի մասին գտնում ենք հետևյալ տողերը.

Ի սառնամանիք Հիւսիս է ուռուտ ազգն բնական
 Աշխարհն նոցա Մոսկով մինչ ի ծովն Կասբիական...⁷³:

71 Ս. է. Քոլլանշյան. Հայերի մասնակցությունը հակաթուրքական լիգայի ստեղծման և Հունգարիայի ազատագրման գործում՝ XVII դ.—Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից, Երևան, 1983, էջ 123—124:

72 Հ. Տաշյան. Նշվ. աշխ., էջ 33:

73 Նույն տեղում:

Մենք հակված ենք նաև կարծելու, որ Վիեննայի և Բուդայի աղատագրությանը սատարող այնուհայ գործիչների ծրագրերում ևս պետք է որ առկա լինեն Հայաստանի ազատագրության համար գործելը:

Այսպիսով, սուլթանական Թուրքիայի ժանր լծից Հունգարիայի և նրա մայրաքաղաք Բուդայի աղատագրման խնդրում իրենց գործուն մասնակցությունն են ունեցել հայերը: Սակայն նրանք ինչպես Հունգարիայի, այնպես էլ Հայաստանի ազատագրությունը դրանք են միասնության մեջ, քանի որ համաման է եղել այդ ժողովուրդների պատմական ճակատագիրը, ուստի համաման պետք է լինեն նաև նրանց ազատագրման համար մղվող պայքարի եղանակները:

**УЧАСТИЕ АРМЯН В ОСВОБОЖДЕНИИ СТОЛИЦЫ ВЕНГРИИ
БУДЫ ОТ ОСМАНСКОГО ИГА
(К 300-летию освобождения Буда)**

С. Э. КОЛАНДЖЯН

Резюме

На основе манускриптов, памятных записей и других неопубликованных источников, хранящихся в Венской национальной библиотеке и архиве, в статье раскрывается деятельность Габриела Шапин-Гарасарци, жителя Вены Ованеса Диодата, врача Шагина Нурвели, капеллана вардапета Нерсеса Ереванци и других армян в борьбе за освобождение Буда, а также против тюркско-татарских войск, вторгшихся в Трансильванию. Помогая освободительной борьбе венгерского народа против Османской Турции, армяне, жившие в Молдавии, Валахии, Австрии и Венгрии, внесли свою лепту и в дело освобождения родного народа.